



ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՅ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՑԱՎԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՄԵՇԱՆՈՒՆ ԲԱՆԱՍՏԵՂԾ ԱՎԵՏԻՔ ԻՍԱՀԱԿՅԱՆԻ ՄԱՀՎԱՆ ԱՌԹԻՎ.

Ամենայն հայոց Մայր Աթոռ և Էջմիածնից, վերջին ողջույն և օրինական ամենայն հայոց բանաստեղծ Ավետիք Խամակյանին, որ բաժնվելով մեր աշխարհից, անցնում է խաղաղ ու անվրդով կյանքի մյուս ափին:

Այս բաժանումը խոր վիշտ է թողնում բոլոր սրտերում, որ բարախում են հայրենի երկրում և հայ սփյուռքում:

Մեր ժողովուրդը կորցնում է իր մեծ զավակին, որ ավելի քան կես դար վաս պահեց ջահը մեր ազգի ազմիվ հուզգերի:

Հայ գրականությունը կորցնում է իր մեծաստադանող Վարպետին, որ իր բովանդակ նոգին լուսի վերածած ընծա բերեց իր հարազատ ժողովրդին ու ամրող աշխարհին:

Կորցնում է հան Մայր Աթոռը իր մեծ բարեկամին ու սիրեցյալ որդուն, որ մեր և Էջմիածնի հազարամյա բարերի խորհուրդը սրտում, աղոթում էր վերածնված մեր հայրենիքի կյանքի, արևի ու խաղաղ, ազատ վերելքի համար:

Վարպետը մեռավ, Վարպետը կապրի և պիտի ապրի հայ ժողովրդի նոգում ու կյանքում, բաշխվելով ամրոշապես մեզ բոլորին և նետազա բոլոր մերունդներին: Եվ հա կմնա միշտ մեզ հետ, կինի միշտ մերը՝ իբրև ներշնչման աղբյուր, իբրև լուսաշող փարու:

Տիրոջ ողորմությամբ հանգիւստ իր նոգվոյն, խաղաղություն և լուս, այժմ և հավիտյան:

ՎԱԶԳԵՆ Ա.
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՅ

Ս. Էջմիածնին

(«Էջմիածն» ամսագիր, 1957 թ., Դա. Ժ, էջ 68)